

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը, եւ Ռուսաստանի Դաշնության կրթության եւ գիտության նախարարությունը եւ այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 1995 թվականի նոյեմբերի 13-ին Ռուսաստանի Դաշնության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ մշակույթի, կրթության եւ գիտության բնագավառում համագործակցության վերաբերյալ կնքված Համաձայնագրի դրույթներով,

ձգտելով գործընկերային կապերի եւ կրթության բնագավառում Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության համագործակցության հետագա զարգացմանը, կարելի էր նշանակություն տալով Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության ժողովուրդների կրթական պահանջմունքների բավարարման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, համաձայնության եկան ներքոհիշյալի վերաբերյալ.

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը զարգացնելու են համագործակցությունը ընդհանուր, նախնական մասնագիտական, միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության բնագավառներում:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը երաշխավորում են բոլոր պետական ուսումնական հաստատությունների իրավահավասարությունը՝ անկախ ուսուցման լեզվից, եւ հավասարապես աջակցում են նրանց՝ կազմակերպական, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական եւ ֆինանսական հարցերում:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը նպաստելու են Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության ընդհանուր, նախնական մասնագիտական, միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների միջեւ ուղիղ կապերի հաստատմանը եւ զարգացմանը՝ ըստ համագործակցության մասին նրանց միջեւ կնքված պայմանագրերի:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը նպաստելու են դպրոցականների, սովորողների, ուսանողների, ասպիրանտների, մասնագետների եւ դասախոսների փոխանակմանը՝ ուսուցման, գիտական ստաժավորման, դասախոսությունների ընթերցման, դասախոսական աշխատանքի եւ որակավորման բարձրացման նպատակով:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը ստեղծելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի բավարարվեն Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Ռուսաստանի քաղաքացիների եւ Ռուսաստանի Դաշնության տարածքում բնակվող Հայաստանի քաղաքացիների, համապատասխանաբար, ռուսաց եւ հայոց լեզուներով ընդհանուր եւ մասնագիտական կրթություն ստանալու պահանջմունքները:

ՅՈՒՂՎԱԾ 6

Կողմերը փոխադարձության սկզբունքով, ըստ համաձայնեցված մասնագիտությունների, սահմանում են ենթագերատեսչական միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության ամենամյա չափաքանակները՝ ուսանողների, ասպիրանտների եւ ստաժորների համար:

ՅՈՒՂՎԱԾ 7

Ռուսական կողմը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ամեն տարի տրամադրելու է մինչեւ 40 կրթաթոշակ (մինչեւ 30 կրթաթոշակ՝ ուսուցման լրիվ դասընթացի համար, մինչեւ 10-ը՝ ասպիրանտուրայում ուսանելու համար)՝ ենթագերատեսչական ուսումնական հաստատություններում դաշնային բյուջեի միջոցների հաշվին սովորելու եւ որակավորումը բարձրացնելու նպատակով: Մասնագիտությունները եւ մասնագետների պատրաստման ուղղությունները, ինչպես նաեւ ընդունելության պայմանները Կողմերը համաձայնեցնելու են անմիջականորեն կամ դիվանագիտական խողովակներով:

ՅՈՒՂՎԱԾ 8

Հայկական կողմը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին ամեն տարի տրամադրելու է մինչեւ 15 կրթաթոշակ (մինչեւ 10 կրթաթոշակ՝ ուսուցման լրիվ դասընթացի համար, մինչեւ 5 կրթաթոշակ՝ ասպիրանտուրայում ուսանելու համար)՝ ենթագերատեսչական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի հաշվին սովորելու եւ որակավորումը բարձրացնելու նպատակով: Մասնագիտությունները եւ մասնագետների պատրաստման ուղղությունները, ինչպես նաեւ ընդունելության պայմանները Կողմերը համաձայնեցնելու են անմիջականորեն կամ դիվանագիտական խողովակներով:

ՅՈՒՂՎԱԾ 9

Կողմերն աջակցելու են իրենց երկրների քաղաքացիներին համագործակից երկրի ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու կամ որակավորումը բարձրացնելու հարցում, պայմանով, որ ուսուցման ծախսերը փոխհատուցվեն քաղաքացիների կամ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցներով:

ՅՈՒՂՎԱԾ 10

Կողմերը նպատակահարմար են գտնում հավատարմագրված ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի համաձայնեցված ստեղծումը, համապատասխանաբար, Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ այդ ուսումնական հաստատություններին Կողմերի պետությունների կրթական օրենսդրությանը համապատասխան տրված արտոնագրերի փոխադարձ ճանաչման հիման վրա:

ՅՈՒՂՎԱԾ 11

Կողմերն աջակցելու են 1997 թ. օգոստոսի 29-ին միջկառավարական Համաձայնագրի հիման վրա ստեղծված Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանի հետագա զարգացմանը:

ՅՈՒՂՎԱԾ 12

Կողմերը կքննարկեն են Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանին կից ռուսաց

լեզվով ուսուցմամբ ճեմարանի, հումանիտար ուղղվածության միջին մասնագիտական ուսումնական հաստատության /քոլեջի/, տնտեսագիտական, իրավաբանական եւ լեզվաբանական ուղղություններով երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման, գիտակրթական եւ մշակութային Հայ-Ռուսական կենտրոնների եւ Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանի մասնաճյուղերի բացման հարցերը:

ՀՈՂՎԱԾ 13

Կողմերը զարգացնելու են համագործակցությունը մանկավարժական եւ գիտամանկավարժական մասնագետ կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման բնագավառում:

ՀՈՂՎԱԾ 14

Կողմերը խրախուսում են իրենց ուսումնական հաստատությունների միջեւ ուսանողների, դասախոսների եւ գիտնականների փոխանակման վերաբերյալ ուղղակի պայմանագրերի կնքումը՝ ուսուցման որակը բարձրացնելու, համատեղ հետազոտություններ անցկացնելու, ուսումնական գործընթացի կազմակերպման եւ գիտական հետազոտությունների բնագավառներում փորձի փոխանակման նպատակով:

ՀՈՂՎԱԾ 15

Կողմերն ապահովում են պայմաններ հիմնարար, կիրառական եւ հումանիտար գիտական հետազոտությունների բնագավառներում համագործակցության, համատեղ կրթական նախագծերի եւ ծրագրերի մշակման ու իրականացման համար, այդ թվում նաեւ՝ հեռահար /դիստանցիոն/ ուսուցման վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ 16

Կողմերը կանոնավոր կերպով փոխանակելու են նորմատիվ-իրավական փաստաթղթեր, կրթական համակարգի բարեփոխման եւ կազմակերպման հարցերին վերաբերվող փորձառություն եւ այդ նպատակով իրականացնելու են մասնագետների ու փորձագետների պատվիրակությունների փոխանակում:

ՀՈՂՎԱԾ 17

Կողմերը պատրաստակամություն են հայտնում Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության համապատասխան դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների երեխաներին հնարավորություն ընձեռնելու ուսանել Կողմերի նախնական մասնագիտական, միջին եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ առանց ուսուցման ծախսերի փոխհատուցման եւ կրթաթոշակի հատկացման:

ՀՈՂՎԱԾ 18

Կողմերը հնարավորություն են ընձեռնելու ՌԴ-ում բնակվող եւ ՀՀ-ում բնակվող դպրոցականներին, սովորողներին, ուսանողներին եւ ասպիրանտներին մասնակցելու Ռուսաստանի Դաշնությունում եւ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ստեղծագործական մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին, սեմինարներին եւ գիտաժողովներին:

ՀՈՂՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի գրավոր

համաձայնության դեպքում:

Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածով նախատեսված կարգի համաձայն:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրարկման վերաբերյալ տարակարծությունները Կողմերը կլուծեն բանակցությունների եւ խորհրդատվությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 20

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար Կողմերի ազգային օրենսդրություններով սահմանված անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական խողովակներով գրավոր ծանուցումը ստանալու օրվանից եւ գործում է հինգ տարի ժամկետով:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար երկարաձգվում է հինգ տարով, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացնում Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը կամ նրա որեւէ փոփոխություն չեն ազդի Համաձայնագրի գործողության ընթացքում սկսված եւ մինչեւ փոփոխությունները կամ դադարեցումը չավարտված նախագծերի իրականացման վրա:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2004 թվականի հուլիսի 13-ին երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ ռուսերեն եւ հայերեն, ընդ որում երկու տեքստն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. դեկտեմբերի 5-ից: